ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 17.04.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ
թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/49

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, քննելով Ա/Ձ Վյաչեսլավ Ամիրջանյանի կողմից 30.03.2018թ. ներկայացված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2018/49 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. Ա/Ձ Վյաչեսլավ Ամիրջանյանի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

Ա/Ձ Վյաչեսլավ Ամիրջանյանը (այսուհետ նաև՝ Մասնակից) 30.03.2018թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

ՀՀ ԱՆ ՔԿ վարչության կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-18/16» ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Վերոնշված Ընթացակարգին, ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ է ներկայացրել նաև Ա/Ձ Խոսրով Ջահինյանը:

Համաձայն վերոնշված Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.03.2018թ. ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 2.9 կետի՝ «ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-18/16» ծածկագրով գնման ընթացակարգի 9-րդ չափաբաժնի մասով գնման ընթացակարգին առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել Խոսրով Ջահինյան Ա/Ձ-ն:

Նույն արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ Ընթացակարգի գանահատող հանձնաժողովը որոշել է ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ ՀՀ բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև սույն կարգով սահմանված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձին տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն մասում նշված հարկի գումարի հաշվարկման:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ

ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումը և համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման:

Նույն կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ընթացակարգի հրավերի 5.2.-րդ կետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումը և համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման:

Այսպիսով, Խոսրով Ջահինյան Ա/Ձ-ն մասնակցել է ՀՀ ԱՆ ՔԿ վարչության կարիքների համար՝ սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-18/16» ծածկագրով գնանշման հարցմանը:

Վերոնշված Ընթացակարգին մասնակցության հայտեր ներկայացնելիս՝ Խոսրով Ջահինյան Ա/Ձ-ի կողմից ներկայացված գնային առաջարկի 4-րդ սյունակը (ԱԱՀ) լրացված չէ:

«ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-18/16» ծածկագրով գնանշման հարցման մրցույթին Խոսրով Ջահինյան Ա/Ձ-ի կողմից հայտը ներկայացնելիս՝ գնային առաջարկ հավելված 5-ը ներկայացվել է հետևյալ ձևով՝

Չափա-բաժինների համարները	Ապրանքի անվանումը	Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	2	3	4	5=3+4
9	Սոխ, գլուխ	4,988,480 Չորս միլիոն ինը հարյուր ութսունութ հազար չորս հարյուր ութսուն		4,988,480 Չորս միլիոն ինը հարյուր ութսունութ հազար չորս հարյուր ութսուն

Վերոգրյալի հետ կապված Մասնակիցը հայտնել է, որ Խոսրով Ջահինյան Ա/Ձ-ն ներկայացնելով գնային առաջարկը՝ 4-րդ սյունակում չի ներկայացրել ՀՀ պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը, մինչդեռ համաձայն www.taxservice.am պաշտոնական կայքում տեղադրված տեղեկության (կցվում է)՝ Խոսրով Ջահինյան Ա/Ձ-ն (52160025) հանդիսանում է ԱԱՀ վճարող սուբյեկտ (ԱԱՀ վճարողի հաշվառման համար՝ 52160025/1):

Ընթացակարգի հրավերի հավելված 5-ով նախատեսվում է գնային առաջարկի հետևյալ օրինակելի ձևը.

Հավելված 5
«ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-18/16»* ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿ

Ուսումնասիրելով «*ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-18/16*»* ծածկագրով գնանշման հարցման հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը, _____
-ն առաջարկում է

մասնակցի անվանումը

պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով.

ՀՀ դրամ

Չափաբաժինների համարները	Ապրանքի անվանումը	Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5=3+4*
1	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N1>>			
2	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N2>>			
3	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N3>>			
...	...			
...	...			

_____ _____
մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) ստորագրությունը

սույն հավելվածը չի կնքվում, եթե այն հաստատվում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ:
** լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:*
*****եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:***

Այսինքն՝ Ընթացակարգի հրավերով հստակ սահմանվել է, որ եթե մասնակիցը ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում, ինչը Խոսրով Ջահինյան Ա/Ձ-ի կողմից չի նշվել:

Սակայն ինչպես նշվել է, Խոսրով Ջահինյան Ա/Ձ-ն ներկայացնելով գնային առաջարկը՝ 4-րդ սյունակում չի ներկայացրել ՀՀ պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը, մինչդեռ համաձայն www.taxservice.am պաշտոնական կայքում տեղադրված տեղեկության համաձայն՝ Խոսրով Ջահինյան Ա/Ձ-ն (52160025) հանդիսանում է ԱԱՀ վճարող սուբյեկտ (ԱԱՀ վճարողի հաշվառման համար՝ 52160025/1)

Վերոգրյալի հետ կապված Ա/Ձ Վյաչեսլավ Ամիրջանյանը հայտնել է, որ իր կողմից փաստաբանական հարցում է կատարվել ՀՀ ԿԱ ՊԵԿ, որով հայտնել է, որ ըստ www.taxservice.am պաշտոնական կայքում տեղադրված տեղեկության՝ Խոսրով Ջահինյան Ա/Ձ-ն (52160025) հանդիսանում է ԱԱՀ վճարող սուբյեկտ (ԱԱՀ վճարողի հաշվառման համար՝ 52160025/1): Ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով՝ Մասնակիցը խնդրել է տրամադրել տեղակատվություն՝ արդյոք Խոսրով Ջահինյան Ա/Ձ-ն (52160025) հանդիսանում է ԱԱՀ վճարող, թե ոչ:

Ա/Ձ Վյաչեսլավ Ամիրջանյանը բողոքով հայտնել է, որ Խոսրով Ջահինյան Ա/Ձ-ն, Մասնակցի ունեցած տեղեկությունների համաձայն, 2016թ. և 2017թ. ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային հաշվետվություններ չի ներկայացրել:

Վերոգրյալի հետ կապված կրկին հարցում է կատարվել ՀՀ ԿԱ ՊԵԿ, որով Մասնակիցը խնդրել է հայտնել, թե արդյոք Խոսրով Ջահինյան Ա/Ձ-ն (52160025) 2016թ. և 2017թ. ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային հաշվետվություններ ներկայացրել է թե ոչ և չներկայացնելու արդյունքում կարող էր առաջանալ պարտք, թե՝ ոչ:

Ա/Ձ Վյաչեսլավ Ամիրջանյանը գտնում է, որ նման փաստական հանգամանքների պայմաններում Խոսրով Ջահինյան Ա/Ձ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը և համապատասխանաբար նաև հայտը ենթակա էր մերժման Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից:

Ա/Ձ-ի Վյաչեսլավ Ամիրջանյանը 13.04.2018թ. գրությամբ հայտնել է, որ Ա/Ձ-ի Վյաչեսլավ Ամիրջանյանի կողմից ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 30.03.2018թ. ներկայացված թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/49 բողոքի շրջանակներում 05.04.2018թ. տեղի ունեցած նիստի ժամանակ նիստը նախագահողի կողմից հարց է բարձրացվել, թե Ա/Ձ

Խոսրով Ջահինյանը որ թվականից է հանդիսանում ԱԱՀ վճարող և արդյոք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ, այն է՝ 19.03.2018թ. հանդիսացել է ԱԱՀ վճարող, թե՝ ոչ:

Վերոնշված հարցի վերաբերյալ Մասնակիցը հայտնել է, որ մուտք գործելով հարկային ծառայության (tax service) պաշտոնական համացանցային կայքէջ՝ հստակ երևում է, որ Խոսրով Ջահինյան Ա/Ձ-ն (ՀՎՀՀ 52160025) հանդիսանում է ԱԱՀ վճարող՝ 01.01.2018թ.-ից:

Կից ներկայացվել է հարկային ծառայության (tax service) պաշտոնական համացանցային կայքէջի համապատասխան արտատպումը:

Ա/Ձ Վյաչեսլավ Ամիրջանյանը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 05.04.2018թ. ժամը 11:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչությունը 04.04.2018թ. թիվ 40/11-1625 գրությամբ հայտնել է, որ «ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-18/16» ծածկագրով ընթացակարգի մասնակից Ա/Ձ Խոսրով Ջահինյանը նախկինում կատարած նմանատիպ ապրանքների մատակարարման պայմանագրին կից գնահատող հանձնաժողովին է ներկայացրել 43014000 ՀՀ դրամի հաշիվ-ապրանքագրեր, որով 2017թ. ընթացքում ՀՀ պաշտպանության նախարարությանը մատակարարել է կարտոֆիլ և ըստ ներկայացրած հաշիվ-ապրանքնագրերի Ա/Ձ Խոսրով Ջահինյանը չի հանդիսացել ԱԱՀ վճարող: Հաշվի առնելով նշվածը և հայտով ներկայացրած գնային առաջարկը, «ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-18/16» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը Ա/Ձ Խոսրով Ջահինյանին դիտարկել է որպես ԱԱՀ չվճարող կազմակերպություն:

ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 05.04.2018թ. ժամը 11:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. ԳԲԽ-ԱՄ-2018/49 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-ԱՄ-2018/49 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության կողմից ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-18/16» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների 19.03.2018թ. հայտ է ներկայացրել Ա/Ձ Խոսրով Ջահինյանը:

2. Ա/Ձ Խոսրով Ջահինյանը հայտի թիվ 5 հավելված գնային առաջարկի «ԱԱՀ» սյունակը չի լրացրել:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.03.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 2-րդ կետի 2.9-րդ ենթակետով կայացված որոշմամբ Ընթացակարգի 9-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել Ա/Ձ Խոսրով Ջահինյանը:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.03.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետի 1.9-րդ ենթակետով կայացված որոշմամբ Ա/Ձ Խոսրով Ջահինյանը ճանաչվել է ընտրված մասնակից Ընթացակարգի 9-րդ չափաբաժնի մասով:

5. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 13.04.2018թ. թիվ 70-8/18858-18 գրության համաձայն՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ տեղեկատվական բազայում առկա տվյալների համաձայն՝ Ա/Ձ Խոսրով Ջահինյանը 2018թ. համարվում է ԱԱՀ վճարող:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Ա/Ձ Վյաչեսլավ Ամիրջանյանի 30.03.2018թ. բողոքը, ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության 04.04.2018թ. թիվ 40/11-1625 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 13.04.2018թ. թիվ 70-8/18858-18 գրությունը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ ***եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձին տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:*** Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն մասում նշված հարկի գումարի հաշվարկման:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: ***Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:*** Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումը և համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության կողմից ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-18/16» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի հրավերի հավելված 5-ով նախատեսվել է գնային առաջարկի հետևյալ օրինակելի ձև.

ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿ

Ուսումնասիրելով «***ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-18/16***»* ծածկագրով գնանշման հարցման հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը, _____
-ն առաջարկում է

մասնակցի անվանումը

պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով.

ՀՀ դրամ

Չափա-բաժինների համարները	Ապրանքի անվանումը	Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5=3+4*
1	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N1>>			
2	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N2>>			
3	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N3>>			

...	...			
...	...			

[1] սույն հավելվածը չի կնքվում, եթե այն հաստատվում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ:
** լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:*
*****եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:***

Ընթացակարգին մասնակելու նպատակով հայտ է ներկայացրել Ա/Ձ Խոսրով Ջահինյանը, ով հայտի թիվ 5 հավելված գնային առաջարկը ներկայացրել է հետևյալ ձևով.

Չափա-բաժինների համարները	Ապրանքի անվանումը	Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5=3+4*
9	Սոխ, գլուխ	4 988 480 Չորս միլիոն ինը հարյուր ութսունութ հազար չորս հարյուր ութսուն		4 988 480 Չորս միլիոն ինը հարյուր ութսունութ հազար չորս հարյուր ութսուն

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.03.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 2-րդ կետի 2.9-րդ ենթակետով կայացված որոշմամբ Ընթացակարգի 9-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել Ա/Ձ Խոսրով Ջահինյանը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.03.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետի 1.9-րդ ենթակետով կայացված որոշմամբ Ա/Ձ Խոսրով Ջահինյանը ճանաչվել է ընտրված մասնակից Ընթացակարգի 9-րդ չափաբաժնի մասով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը բողոքի քննության շրջանակներում 05.04.2018թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/6202-18 գրությամբ դիմել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին՝ խնդրելով հայտնել, թե Ա/Ձ Խոսրով Ջահինյանը 19.03.2018թ. դրությամբ

(հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) հանդիսացել է արդյոք ավելացված արժեքի հարկ վճարող, թե ոչ:

Ի պատասխան վերոհիշյալ գրության՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն 13.04.2018թ. թիվ 70-8/18858-18 գրությամբ հայտնել է, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ տեղեկատվական բազայում առկա տվյալների համաձայն՝ Ա/Ձ Խոսրով Ջահինյանը 2018թ. համարվում է ԱԱՀ վճարող:

Այսպես՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ ***եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձին տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:***

Միևնույն ժամանակ Ընթացակարգի հրավերի հավելված 5 գնային առաջարկով սահմանվել է, որ եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, <u>ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:</u>

Դրա հետ մեկտեղ Ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 5-րդ կետի 5.2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա ներկայացվող գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:

Մինչդեռ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Ա/Ձ Խոսրով Ջահինյանը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 13.04.2018թ. թիվ 70-8/18858-18 գրության համաձայն, 2018թ. հանդիսանալով ավելացված արժեքի հարկ վճարող (համաձայն՝ ՀՀ հարկային ծառայության www.taxservice.am պաշտոնական կայքում առկա տեղեկատվության՝ ԱԱՀ վճարողի հաշվառման համար 52160025/1), «ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-18/16» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի

մասնակցության հայտի թիվ 5 հավելված գնային առաջարկում չի լրացրել ավելացված արժեքի հարկի գումարը:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 7-րդ կետի 7.2 ենթակետի համաձայն՝ բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը կամ գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ Ա/Ձ Վյաչեսլավ Ամիրջանյանի կողմից 30.03.2018թ. ներկայացված բողոքը հիմնավոր է, քանի որ Ա/Ձ Խոսրով Ջահինյանի կողմից ներկայացված գնային առաջարկը չի համապատասխանում «ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-18/16» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի պահանջներին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Ա/Ձ Վյաչեսլավ Ամիրջանյանի կողմից 30.03.2018թ. ներկայացված բողոքը բավարարել.

պարտավորեցնել «ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-18/16» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին մերժել Ա/Ձ Խոսրով Ջահինյանի կողմից ներկայացված հայտը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**